

ԿՐՕՆԱԿԱՆ

«Ձի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր խոնարհեսցի, և որ խոնարհեսցուցանէ զանձն՝ բարձրացցի»

(Ղուկ. 18:14)

Այսօրուան աւետարանական ընթերցումին՝ Փարիսեցիի և Մաքսաւորի առակով Աստուածորդին կու գար ամբողջացնել աղօթքի վերաբերեալ իր ուսուցումը, թէ ո՛չ միայն ինչու աղօթել, այլ նաեւ ինչպէս աղօթել: Առակը կու տայ պատկերը այդ օրերուն երկու հակոտնեայ նկարագիրներու, Փարիսեցիին՝ որ ճշդապահ էր և միաժամանակ խստապահանջ օրէնքը ձեւականօրէն յարգելու, և Մաքսաւորը՝ որ հասարակութեան կողմէ նկատուած էր իբր ատելի մեղաւոր մը:

Փարիսեցիներ խիստ և ծայրայեղ կրօնականներն էին, որոնք այնքան մը յարած էին Մովսէսի օրէնքներուն, որ կարծէք ցանկապատ մը բարձրացուցած էին Օրէնքին շուրջ, որ իրականութեան մէջ իրենց նախահայրերու բանաւոր աւանդութիւնն էր: Փարիսեցին կը կարծէր թէ ինք Աստուծոյ կողմէ մարդկութեան տրուած պարգեւն էր: Ան ինքն իր աղօթքի առանցքն էր և ինքզինք դրած էր բացառիկ և իւրայատուկ դասակարգի մարդոց տեղ: Այնքա՛ն ամբարտաւանութիւն կը հոսէր իրմէ, որ կը կարծէր թէ ինք ո՛չ միայն կը պահէր Ս. Գրքի պատուիրանները, այլ նոյնիսկ անցած էր անոնց սահմանը, որովհետեւ եթէ իր կրօնը իրմէ կը պահանջէր տարեկան մէկ պահեցողութիւն, ինք շաբաթը երկու անգամ պահէր կը պահէր: Եթէ Ս. Գիրքը մէկ-տասաներորդ տուրք կը պահանջէր հրեաներէ իրենց տարեկան հունձքէն, Փարիսեցին հաւատարմօրէն կու տար իր բոլոր եկամուտներուն տասանորդը: Եւ ասոր համար էր, որ Փարիսեցիին աղօթքը հաճելի չէր կրնար թուիլ Աստուծոյ, որովհետեւ անոր ամբարտաւանութիւնը զինք վերածած էր եսակեդրոն անձի մը, այնքա՛ն լեցուած ինքն իրմով, որ կ'ատէր ուրիշները:

Դժբախտաբար Փարիսեցիին այս ինքնահաւանութիւնը իրենց և այդ ժամանակներու յատուկ նկարագրի գիծ մը չէ, անկասկած մենք բոլորս կը տառապինք մենք զմեզ ուրիշներէ աւելի բարձր և լաւ զգալու տրամադրութեամբ, մենք բոլորս բնածին զաւակներն ենք ինքնահաւանութեան և ամբարտաւանութեան, ներքնապէս ձգտող նմանելու այսօրուան առակի առաջին հերոսին, որ իր աղօթքը կը սկսէր Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելով, ո՛չ թէ մղուած երախտագիտութենէ, այլ որ ինք աւագակ մը, անբարոյ մը և մեղաւոր մը չէր, քիչ անգին գտնուող Մաքսաւորին նման, այլ ան կը թուէր իր առաւելութիւններն ու կատարած բարիքները, գիտակցաբար մոռնալով յիշել իր սխալները, թերութիւններն ու մեղքերը, որովհետեւ ան ամբարտաւանօրէն ինքզինք արդար կը նկատէր, մէկը՝ որ ներման կարիք չունէր, այսպէսով ան կը շարունակէր մնալ մեղաւորի իր վիճակին մէջ: Դարձեալ իրեն և իր նմաններուն կը վերաբերի մեր Տիրոջ խօսքերը, ուրիշ առիթով մը ուղղուած խումբ մը Փարիսեցիներու. «Եթէ կոյր ըլլայիք մեղք պիտի չունենայիք, սակայն հիմա որ կ'ըսէք թէ կը տեսնէք, ձեր մեղքը կը մնայ» (Յովհ. 9:41): Հետեւաբար Փարիսեցին Տաճարէն տուն կը դառնար չարդարացած:

Այսօրուան առակին երկրորդ հերոսն է Մաքսաւորը, որ կանգնած Տաճարին անշուք մէկ անկիւնը, ընկճուած իր մեղքերուն և գործած սխալներուն բեռան տակ, անդրադառնալով իր ոչնչութեան, առանց համարձակելու նոյնիսկ գլուխը բարձրացնելու, կուրծքը ծեծելով կը հառաչէր ըսելով. «Տէր Աստուած, ներէ՛ զիս, մեղաւորիս»: Այսպէսով ան կ'արժանանար Երկնայինին ներման:

Մաքսաւորներն այդ օրերուն հրեաներու կողմէ ատուած տարրն էին, որովհետեւ անոնք իբր հարկահաւաքներ՝ կը գործէին թշնամի հռոմէացիներու հաշւոյն: Թէեւ չափազանց հարուստ, բայց և այնպէս հրեաներ, մանաւանդ Փարիսեցիներ՝ կ'ատէին զիրենք: Սակայն ո՛չ նման այսօրուան առակի Փարիսեցիին, որ ինքնահաւանութիւն և ամբարտաւանութիւն կը հոտէր, Մաքսաւորը աչքի կը զարնէր իր համեստութեամբ. անոր աղօթքը կարճ էր և հետաքրքրական: Անոր պարզութիւնն ու խոնարհութիւնն ակներեւ էր Տաճարին մէջ իր կեցուածքէն, խօսքերէն և աղօթած վայրէն: Ան Փարիսեցիին նման չէր թուէր իր առաւելութիւններն ու կատարած բարեգործութիւնները, այլ գլխահակ ու հառաչելով կը դիմէր Աստուծոյ ներողամտութեան, կրկնելով. «Աստուած, քաւեա՛ զիս, զմեղաւորս»: Արդարեւ ան իր մեղքերուն համար անկեղծ զղջացող հոգիի տէր մէկն էր, որուն համար ալ անոր հաւատքը իրեն տուած էր բաւականաչափ քաջութիւն Աստուծոյ խնդրելու մէկ բան, որուն ինք արժանի չէր, միայն թողութիւն իր մեղքերուն:

Հին Կտակարանի մէջ եւս կը գտնուի նմանօրինակ աղօթք մը, վերագրուած Դաւիթ Թագաւորին, հովիւ՝ և միաժամանակ բանաստեղծ ու ռազմիկ, մինն Իսրայէլի մեծագոյն թագաւորներէն, որուն անբարոյութիւնը երբ ի յայտ կու գայ, ան կը գրէ իր նշանաւոր սաղմոսը, «Ողորմեա՛ ինձ Աստուած», որ անմիջական աղաչանք մը, Հայր Աստուծոյ գութին ուղղուած աղերս մըն էր, ո՛չ թէ ուրիշներու՝ այլ միայն իր իսկ մեղքերուն համար: Անկասկած, Դաւիթ Թագաւոր, Մաքսաւորի նման ինքզինք եւս մեղաւոր զգալով գրած էր իր այդ, այսպէս ըսած «մեղայագիրը»: Իսկ Նոր Կտակարանի՝ Տիմոթէոսի ուղղուած Առաջին Թուղթին մէջ, Պօղոս Առաքեալ եւս, որ Փարիսեցի մըն էր և բռնուն հալածող Քրիստոնեաներու, ինքզինք եւս կը նկատէր մեծ մեղաւոր մը, երբ կ'ըսէր. «Զի Քրիստոս Յիսուս եկն աշխարհ՝ փրկել զմեղաւորս, որոց զուխն ես եմ» (Ա. Տիմ. Ա. 15):

Փարիսեցիի և Մաքսաւորի առակով Աստուածորդին շատ պարզ ու յստակ կերպով կը հասկցնէր իր ունկնդիրներուն, որ մարդուն արդարացումն ու Աստուծոյ կողմէ ընդունուիլը հիմնուած էր միայն Աստուծոյ գութին, վստահութեան, և ո՛չ թէ մեր բարեգործութիւններուն և մեր կողմէ դրական կարծուած արարքներուն վրայ:

Դժբախտաբար, Փարիսեցիութիւնը Ա. դարու յատուկ երեւոյթ մը չէր, այսօրուան առակը յստակ կերպով կը խօսի նաեւ 21 դարու Փարիսեցիներուն և մանաւանդ կրօնականներուն մասին: Երբ մենք սկսինք դառնալ ինքնահաւան և անձնապաստան, և փորձենք մենք զմեզ արդարացնել Աստուծոյ առաջ, ահա այստեղ է որ կը ծագի հարցը. որովհետեւ երբ մենք սկսինք ամբարտաւանանալ մեր կարծեցեալ արդար և ուղիղ ընթացքին համար, հոս է որ մենք կը սկսինք վերէն նայել, այսպէս ըսած, բարոյապէս մեզմէ վար գտնուողներուն վրայ:

Ու թող վայրկեանի մը համար մեր աչքերուն առաջ բերենք տպաւորութիւնը, զոր Քրիստոսի պատմած Փարիսեցիի և Մաքսաւորի առակը կը գործէր իր ունկնդիրներուն վրայ: Անկասկած հոն գտնուող Փարիսեցիները կը բորբոքէին իրենց կատաղութենէն, մինչ ներկայ Մաքսաւորները, գողերն ու պոռնիկները կու լային յուզուած ու վերացած, որովհետեւ առաջին անգամն էր, որ անոնք կը լսէին իրենց դատը պաշտպանող անձանօթ մը, որ կը խօսէր իրենց եւս հաւանական արդարացման մասին:

Փարիսեցիի և Մաքսաւորի առակով Աստուածորդին մարդոց կու տար հոգեւոր կեանքին նորմօտեցում մը, ըսելով թէ ինքնագովութիւնը կ'առաջնորդէր նուաստացումի, մինչ համեստութիւնը կ'ազնուացնէր ու կը բարձրացնէր ենթական: Յակոբոս Առաքեալ իր Թուղթին մէջ կ'ըսէ. «Տէր հակառակ կայ ամբարտաւանից, տայ շնորհս խոնարհաց» (Դ:6): Ամբարտաւանութիւնը հաճելի չէ Հայր Աստուծոյ. Մաքսաւորներ կրնան մեղաւոր ըլլալ, սակայն ոչ ոք իրաւունք ունի անոնց վերէն նայելու, որովհետեւ անոնք եւս կրնան արժանանալ թողութեան, այնքան ատեն որ անոնց աղօթքը ան-

կեղծ է ու սրտաբուխ: Ի վերջոյ մենք լաւ պէտք է գիտնանք թէ մեզ բոլորս փրկողը պիտի ըլլայ Աստուածային սէրն ու գութը, և ո՛չ մեր ապրելակերպը: Անշուշտ այս չինշանակեր, որ Քրիստոս կը թերգնահատէ խոնարհ մօտեցումը, հնազանդութիւնն ու մաքրակրօնութիւնը, եթէ անշուշտ անկեղծ են, այս առակով մեր Տէրը պարզապէս կը փորձէր պատրաստել միտքերը մարդոց՝ որոնք պիտի ընդունուէին Հայր Աստուծոյ կողմէ:

Այս առակի եզրակացութիւնն ու թելադրութիւնը այն է, որ մեր աղօթքները յարատեւօրէն և հաւատքով լեցուն ըլլալով հանդերձ, պարտին բղխիլ խոնարհ ու համեստ հոգիէ, մեղքերէ բոլորովին պարպուած սիրտէ մը, որովհետեւ մենք Աստուածային շնորհներու կ'արժանանանք ո՛չ թէ մեր կարծեցեալ բարեգործութիւններով, այլ միայն Իր գութին շնորհիւ: Ու թող Մեծ Պահոց այս շրջանը մեզի համար ըլլայ հոգեւոր, անկեղծ պատրաստութեան շրջան մը, որպէսզի մենք եւս նման արդարացած Մաքսաւորին, ըսենք. «Հայր, քաւեա՛ զիս զմեղաւորս» և այսպէս արդարացած դիմաւորենք մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան տօնը:

Ն.Ա.Մ.

